

ԼԻԼԻԹ ՍԱՇԱՅԻ ԶԱՔԱՐՅԱՆ

https://orcid.org/0009-0005-4497-5410

Ծննդյան տարեթիվ՝ 16.06.1966

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Երևան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Սաշայի Զաքարյանը Երևանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1983թ. ընդունվել է Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ, պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմություն և իրավունք բաժինը:

1988 թվականից ուսումը շարունակել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում, որն ավարտել է 1991 թ.:

1993 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանի գյուղում 1980-ական թվականներին» թեմայով:

2008 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Լ.Զաքարյանը 1988 թ. աշխատել է Սևանի N 2 միջնակարգ դպրոցում որպես պատմության ուսուցչուհի:

1992 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում որպես ավագ լաբորանտ, այնուհետև նշանակվել է կրտսեր, ավագ գիտաշխատողի պաշտոններում:

1997–2015 թթ. Լ.Զաքարյանը համատեղությամբ աշխատել է Երևանի Հյուսիսային համալսարանում: 2001-2008 թթ. եղել է նույն բուհի Լրագրության և հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, 2009-2011 թթ.՝ Ուսումնական վարչության պետ, 2011-2015թթ.՝ Որակի ապահովման վարչության պետ:

2016-2020 թթ. Լ.Զաքարյանն աշխատել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում որպես Քաղաքականության մշակման և իրականացման ավագ մասնագետ:

2002 – 2004 թթ. դասավանդել է Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանում, 2007-2009 թթ.՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում:
2021-2024 թթ. վարել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրենի պաշտոնը:

Է.Զաքարյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ գյուղի պատմությունը, տեղական ինքնակառավարումն ու տարածքային կառավարումը, քաղաքական տրանսֆորմացիայի հիմնախնդիրները, քաղաքացիական հասարակությունը, կրթական համակարգը, գենդերային հետազոտությունները, գարեջրագործության պատմությունը և այլ հիմնախնդիրներ:

Է.Զաքարյանը հեղինակ է 2 մենագրությունների, ավելի քան 50 գիտական հոդվածների, որից՝ 4 ընդգրկված են Scopus/Webofscience (Q 1, 2025-2026) ՄԳՇ-ում: Հեղինակել է բուհական 2 ձեռնարկ: Հոդվածներ ունի «Հայոց պատմություն» ակադեմիական քառհատորյակի չորրորդ հատորի երկու գրքերում (Նորագույն շրջան, 1918-1991): Համահեղինակել է բուհական 1 դասագիրք, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մասնակցել է տարաբնույթ դրամաշնորհային ծրագրերի:

Է.Զաքարյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, ամառային դպրոցներում, Հայոց բանակի զորամասերում և այլն:

Է.Զաքարյանը պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ գովեստագրով, Հյուսիսային համալսարանի շնորհակալագրերով և պատվոգրերով, 2017թ. ՀՀ ԱԺ պատվոգրով՝ «Կրթության ոլորտում ներդրած ավանդի համար» :

Է.Զաքարյանը կուսակցական չէ:
Է.Զաքարյանը ունի որդի, երկու թոռնիկ: